ԲԱՆԱՎԵԾ ДИСКУССИИ

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀՆԴԿԱՍՏԱՆՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ՄԵԼԻՔՍԵԹ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հայտնի է, որ հնդկահայ գաղթօջախում սկզբնավորվեցին հայկական մամուլն ու քաղաքական հրապարակախոսությունը։ Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը, Շահամիր Շահամիրյանը, Հարություն Շմավոնյանը, ապա որոշ ժամանակ անց Մեսրոպ Թաղիադյանը դարձան հայ ազգային-ազատագրական մտքի ու լուսավորական շարժման առաջնորդները։ Նրանք բոլորն էլ խորությամբ գիտակցում էին բնաշխարհի վիճակը և հեռավոր Հնդկաստանից որոնում էին ազատագրության ուղիներ, մշակում գործնական ու տեսական ծրագրեր և Հայաստանի ապագան տեսնում նաև Ռուսաստանի հետ ունեցած բարեկամության մեջ։ Դրա պերճախոս հաստատումներից է, օրինակ, նրանց ջերմ և խելացի վերաբերմունքը Նոր Նախիջևանի նկատմամբ։ Հնդկաստանում Հովսեփ Էմինի ակտիվ գործունեության ժամանակաշրջանում «Նախիջևանի հիմնադիր Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը գաղթականների աղքատությունից առաջ եկած թշվառությունների առաջն առնելու համար, դիմեց զանազան միջոցների։ Նա, ի դեպ, նամակներ դրբեց Հնդկաստանի հարուստ հայերին, խնդրելով նյութական աջակցություն։ Եվ հնդկահայ մի խումբ մեծահարուստներ վիթխարի գումարներ և անշարժ դույք են կտակում Նոր Նախիջևանին ու Գրիգորիուպոլիսին՝ ցանկանալով նպաստել Ռուսաստանում նորաստեղծ այդ գաղթօջախի գոյատևմանն ու բարգավաճմանը։

Տարիներ հետո՝ 1846 թ. Մ. Թաղիադյանն իր «Ազգասերում» առաջ քաշեց հնդկահայերի կտակը նորնախիջևանցիներին հասցնելու հարցը։ Այդ նախաձեռնությունը գործնականորեն ու հետևողականորեն շարունակեց Միքայել Նալբանդյանը՝ սկզբում իր «Հիշատակարանում», ապա՝ «Հյուսիսափայլում», դեպի «սիրական եղբարք» և «անբաղդացած գերդաստանի արյունակից անդամք» ուղղված կրքոտ, սրտացավ դիմումով։

«Հիշատակարանում» Միքայել Նալբանդյանը մանրամասնորեն խոսում է Նոր Նախիջևանի հիմնադրման մասին և Հովսեփ Արղությանին գնահատում որպես «հիշատակի արժանի», որը փաստորեն կամուրջ էր կապում հայկական գաղթօջախների միջև։ Միքայել Նալբանդյանը նոր թափով նախաձեռնելով հնդկահայերի կտակների ձեռքբերման գործը, դրանով իսկ կարծես շարունակում էր նաև Հ. Էմին—Հ. Արղության—Մ. Թաղիադյան գիծը՝ ազգային-ազատագրական պլանով։

«Ազգային ժառանգությունք» հոդվածում, որը պետք է դիտել Միքայել Նալբանդյանի հայրենասիրական քաղաքական ծրագրի դրսևորումներից մեկը, կարդում ենք. «Հայերի կյանքը, նոցա դրությունը աշխարհի երեսին, արդեն մի մեծ շարժառիթ է այսպիսի անձնազոհ օգնութենների, եթե միայն ազգի անդամքը կարողություն ստանային՝ հասկանալու յուրյանց անձը և յուրյանց ազգը»[2]։ Հեռագնա, հեռահար ու այսօր էլ ուշագրավ այս միտքը չափազանց կարևոր է հասկանալու համար Միքայել Նալբանդյանի քաղաքական ծրագրերի ընդգրկումները՝ կապված հնդկահայերի կտակներին։

---

1 «Լումա», 1904, № 2, էջ 142։

2 Միքայել Նալբանդյան. Երկերի լիակատար ժողովածու. հ. 2, Երևան, 1980, էջ 345։

Նա ծառանում է «ազգակործան անմիաբանության» դեմ, առաջարկում վառվել գործունեությամբ ու իսկույնևեթ ձեռնամուխ լինել՝ շուրջ յոթանասունամյա փոշու տակից հանելու կտակները ու գումարը հասցնելու տեղ, «որով կարելի էր կանգնեցնել ազգի համար մի հոյակապ ավազան լուսավորության»։

«Ազգային ժառանգությունք» հոդվածի հետ միասին «Հյուսիսափայլում» զետեղում է նաև հնդկահայերի կտակների օրինակները։ Մանրամասնորեն բացատրելով կտակների ձեռքբերման դժվարին ուղիները և միջոցները, նա առաջարկում է ընտրել «բանագետ և ճարագատ մարդ», որը կկարողանար հաղթահարել բոլոր դժվարությունները ու լուծել կտակի կնճռոտ հարցը։

Նա չափազանց նրբանկատորեն է քննում հնդկաստանյան ճանապարհորդության երթուղին։ «Հիշատակարանում» նա կտակի կարևորության մասին գրել էր դեռևս 1858 թ., իսկ պաշտոնական հողի վրա դա դնում է 1859-ին՝ «Հյուսիսափայլի» հինգերորդ (մայիսի) ամսատետրակում տպագրված հոդվածով և գործնական ընթացք է տալիս 1860 թ. գարնան-ամռան ամիսներին։ Նամակագրությունը Նոր Նախիջևանի քաղաքագլուխ Կարապետ Հայրապետյանի հետ պարզորեն հաստատում է, որ Միքայել Նալբանդյանն ինքն էր ցանկանում լինել նորնախիջևանցիների հնդկաստանյան պատվիրակը ու ըստ ամենայնի նախապատրաստվում էր դրան։ Այդ ընթացքում նա հարաբերությունների մեջ է մտնում նաև Պետերբուրգում գտնվող անգլիական գրասենյակների հետ, կետ առ կետ քննարկում ճանապարհորդության ամեն մի մանրամասնը։ «Մեզ քաջ հայտնի է, որ վերոգրյալ ճանապարհորդության երկայնությունը մինչև Կալկաթա հասանում է 18 000 վերստից մինչև 20 000 վերստ, ուրեմն գնալը և գալը 36 000 վերստից մինչև 40 000 վերստ։ Այս կատակ չէ. հավելացուր սորա վերա և այն դժոխային եղանակները կամ ծովային մրրիկները և վտանգները, որոնք շատ նավեր և շողեշարժ պտուտակավոր նավեր կուլ են տվել և տալիս են անդադար, որպիսի վտանգներ պիտի աչքի տակ առնու ճանապարհորդը։ Ուր թողունք զանազան պատահարները այդպիսի հեռավոր և վայրենի աշխարհներում Ասիայի մեջ և այն անակնկալ դեպքերը և ծախքերը, որ մինչև պատահելը չեն երևում մարդու աչքի և եթե կանխատես չէիր, ապա նոքա կծառայեն քեզ հուսահատության և անտանելի նեղության առատ աղբյուրի տեղ»[3]։

Միքայել Նալբանդյանը այնուհետև կարևորեցնում է «Հնդկաստանի հայոց լուսավոր հասարակության և թե անգլիական մեծամեծների» (ընդգծումը մերն է—Մ. Մ.) հետ պատվիրակների շփումները, հանդիպումները՝ որպես Նոր Նախիջևանի շահերի արտահայտիչների, քաղաքի պատվի կրողների, բացատրում դրանց նշանակությունը։

Նոր Նախիջևանում ծավալվում է սուր պայքար՝ ո՞վ պիտի գնա Հնդկաստան։ Մասնակցում են հասարակության բոլոր խավերը, յուրաքանչյուրը հետապնդելով իր որոշակի նպատակները։ Գտնվում են մարդիկ, ովքեր ամեն կերպ ձգտում են խափանել Միքայել Նալբանդյանի թեկնածությունը, պաշտպանելով Գ. Այվազյան-Այվազովսկու թեկնածությունը։

Այդ պայքարում նորից ու նորից ի հայտ են գալիս Միքայել Նալբանդյանի բարձր ու բազմակողմանի ընդունակությունները։ «Խոսքի հերոս լինելուց բացի գործի հերոս էր նա, քաղաքական մարտնչող և ժողովրդական տրիբուն. որպես այդպիսին՝ աննահանջ ստրատեգ և հեռուն տակտիկ»,— գրել է ակադ. Աշոտ Հովհաննիսյանը Միքայել Նալբանդյանի մասին։ Եվ հակառակորդների դեմ մղվող պայքարում հեղափոխական դեմոկրատն օգտագործում է իր ամբողջ զինանոցը և հաղթանակում։ Նոր Նախիջևանի քաղաքագլուխ Կ. Հայրապետյանը, առաջադեմ համաքաղաքացիները կանգնում են նրա թիկունքին։

---

[3] Նույն տեղում, հ. 5, Երևան, 1984, էջ 95—96։

Բացի կազմակերպական-գաղափարական աշխատանքից, նորնախիջևանցիներին իր կողմը գրավելու նպատակային գործերից, հակառակորդներին քննադատելու և չեզոքացնելու քայլերից, նա, Կ. Հայրապետյանի հետ միասին, կատարում է մի դիպուկ և իմաստուն քայլ՝ առաջ է քաշում Հնդկաստան երկու պատվիրակ ուղարկելու խնդիրը։ Ըստ նրա և Կ. Հայրապետյանի ներքին պայմանավորվածության, պատվիրակներից մեկը կլիներ ինքը՝ որպես Նոր Նախիջևանի հասարակական շահերի արտահայտիչ, իսկ մյուսը՝ առաջին գիլդիայի վաճառական Հարություն Աջեմյանը՝ որպես գործարար աշխարհի մարդ, որը մի քանի անգամ եղել էր արտասահմանում և որը ֆինանսական հարցերում լավ կկողմնորոշվեր։ Տակտիկական այս քայլը օգնում է պայքարին։ Միք. Նալբանդյանը գրում է, որ երկրորդ պատվիրակը՝ Հարություն Աջեմյանը, որի հետ Կ. Հայրապետյանի «Նամակի հիման վերա խոսեցա, հոժար ենք երթալ Հնդկաստան»։

Նախապատրաստական բազմակողմանի աշխատանքից հետո նա 1860 թ. հուլիսի 6-ին գալիս է Նոր Նախիջևան։ Դրանից ուղիղ յոթը տարի առաջ էր, 1853 թ. հուլիսին, երբ խույս տալով հետապնդումներից, Միքայել Նալբանդյանը փախավ Մոսկվա։ 1860 թ. օգոստոսի 8-ին Նոր Նախիջևանի քաղաքային մագիստրատը հաստատում է Միքայել Նալբանդյանի և Հարություն Աջեմյանի լիազորագիրը՝ վեց օր հետո պաշտոնական գրություն ուղարկելով Ամենայն հայոց կաթողիկոս Մատթեոսին։ Այդ գրությունում ասված էր, թե «ազգն մեր միաբան հաւանութեամբ և թախանձագին խընդրանօք ընտրեաց յիւր ի լրացեալ երեսփոխանութիւն, զյարգոյ հայրենակիցս մեր զկայսերական Սանկտ Պետերբուրգեան համալսարանի զկանդիտատն արևելյան լեզուագիտութեան զպարոն Միքայէլն Նալբանդեանց և զառաջին կարգի վաճառական Սեաստոսլեայ զպարոն Հարութիւն Աջեանն»։ Բայց միայն Միքայել Նալբանդյանն է մեկնում էջմիածին։ Ճանապարհին լինում է Թիֆլիսում՝ օգոստոսի 24-ից մինչև սեպտեմբերի 3-ը, հանդիպումներ ունենում Ղ. Աղայանի, Մ. Միանսարյանի, Պ. Սիմոնյանի և առաջադեմ այլ մտավորականների հետ, թերևս նրանց միջոցով նույնպես հող նախապատրաստում հնդկաստանյան իր առաքելության համար։ Այս ամենի մասին հանգամանորեն գրել է ակադ. Աշ. Հովհաննիսյանն իր «Նալբանդյանը և նրա ժամանակը» երկհատոր աշխատության առաջին հատորում, ինչպես նաև գրականագետ Ա. Ինճիկյանն իր աշխատություններում։

Շարունակելով ճանապարհը, վերջապես հասնում է էջմիածին։ Այդ ընթացքում դրպարտությունը Միքայել Նալբանդյանի հասցեին ստանում է նորանոր դրսևորումներ։ Հետադիմական ուժերն ամեն կերպ ձգտում են խափանել նրա հնդկաստանյան ուղևորությունը, գործի են դնում բոլոր հնարավոր միջոցները, առաջ քաշում նրա նկատմամբ քաղաքական անվստահության հարցը և այլն և այլն։ Բայց Միքայել Նալբանդյանը շարունակում է չեզոքացնել վտանգը։

Հակառակորդները չեն դադարում հետապնդել նրան, ամեն ջանք գործադրում են՝ կես ճանապարհին թողնելու նրա հնդկաստանյան առաքելությունը։ Միքայել Նալբանդյանը գաղտնի է պահում իր մեկնելու օրը՝ Նոր Նախիջևանի քաղաքագլուխ Կ. Հայրապետյանից տեղեկանալով անդադար հետապնդումների մասին։ «Թուի թէ Նալպանտն երկնչի ի սիպիրէ»,— գրել է Գ. Այվազովսկին (ԳԱԹ, Նոր Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ)։ Սոսկալի այս պայմաններում իր նպատակներին հասնելու համար, ինչպես արդեն ասվեց, Միքայել Նալբանդյանին օգնող հանգամանքներից մեկն էլ Հարություն Աջեմյանի մասնակցությունն էր։ Սակայն Միքայել Նալբանդյանը մենակ է մեկնում Հնդկաստան, առանց սպասելու Հ. Աջեմյանի ժամանելուն Փոթի։

Այս հանգամանքը նալբանդյանագիտության մեջ տեղիք է տվել ծայրահեղ դատողությունների և եզրակացությունների, որոնք ոչ թե «ինչուն»-ն որոնելու հետ են կապված, ինչպես մեզ թվում է, այլ միտված զուտ սո-

ցիոլոգիական դիրքերից հեշտությամբ լուծելու այդ «անհայտ» հավասարումը, մեկին բարձրացնելով մյուսի հաշվին, որի հարկը բնավ չկա։

Հայ գրականագիտության ու պատմագրության մեջ մինչև այսօր այն կարծիքը կա, թե Հ. Աջեմյանը այդ ընդհանուր շղթայի սոսկ պատահական օղակ է եղել։ Մեծավաստակ նալբանդյանագետ, ակադ. Աշ. Հովհաննիսյանը գրել է. «Մյուս ընտրյալը՝ հեշտ կյանքի սովոր լիբերալ բուրժուա Աջեմյանը, չմիացավ ընկերակցին։ Ասենք, բուրժուա ուղեկիցը միայն ոտքի կապիչ պիտի լիներ Նալբանդյանի համար, և այս մի բարեբախտություն էր, որ հրապարակախոսը կարողացավ մենակ ստանձնել հայ կյանքի և գրականության համար արգասավոր հանձնարարությունը ...»[4]։

Իսկ Միքայել Նալբանդյանի կյանքի և ստեղծագործության հմուտ ուսումնասիրող գրականագետ Ա. Մ. Ինճիկյանն այսպես է բնութագրել Հարություն Աջեմյանին. «Հարություն Աճեմյանը, որ Նոր Նախիջևանի հասարակական ժողովի կողմից 1860 թ. հուլիսի 15-ին Նալբանդյանի հետ միասին ընտրվել էր որպես երեսփոխան, մի կիսագրագետ և շահամոլ վաճառական էր, ինչպես հանոզիշ կերպով ցույց են տալիս նրա խճճնագիր համակները[5]։ Պարզ է, որ Նալբանդյանին չէր կարող հաճելի լինել նման մեկի ընկերակցությունը, որը ոչ միայն իրեն չէր կարող օգնել, այլև ըստ ամենայնի պիտի խանգարեր։ Հավանորեն այս հանգամանքը նկատի ունենալով, Հայրապետյանը համաձայնել է, որ Նալբանդյանը մենակ ճանապարհորդի, առանց սպասելու վաճառականական գործերով Նոր Նախիջևանից բացակայող Հարություն Աճեմյանին»[6]։

Մինչև ընդհանուր վերլուծությանն անցնելը, բերենք Մատթեոս Զուխաջյանին 1860 թ. օգոստոսի 14-ին Նոր Նախիջևանից Միքայել Նալբանդյանի գրած նամակից այն քաղվածքը, որտեղից պարզ է դառնում, որ Հարություն Աջեմյանն եղել է Նոր Նախիջևանում. «Երեսփոխանակից նորին. պ. Աջեմեանցն յաւուրս յայսոսիկ հասանք նոյնպէս 'ի Նախիջևան և անդէն վաղվաղակի ուղղոյ լինի յէջմիածին, 'ի համբոյր սրբազնեալ աջոյ մեծի քահանայապետիդ 'ի վերտողեալ միտս»[7]։

Սա ևս տակտիկական քայլ էր՝ իբր երկու պատվիրակներս ենք դալիս Ամենայն հայոց կաթողիկոսին այցելության, բայց Միքայել Նալբանդյանը գնում է միայնակ։ Այո, ամեն բան նախապատրաստված էր, ամեն մի մանրամասն որոշված էր՝ ում հետ ինչպես խոսել, ում ինչպիսի փաստաթուղթ ուղարկել։ Ահա այդ նպատակով էլ նամակում իր և Հ. Աջեմյանի անունից է Միքայել Նալբանդյանը խնդրում. «Վեհափառ տէր, յանուն տառապեալ ազգի մերոյ աղաչեմ զՁեզ յարգեալ զընտրութիւն ազգի մերոյ և հաստատել զարգոյ երեսփոխանս մեր հայրապետական կոնդակօք յանուն երեսփոխանացն և յանուն ազգի մերոյ 'ի Կալկաթա ...»։

Ապա մեկ այլ տեղ. «Նալբանդյանը, չսպասելով երկրորդ պատվիրակ Հարություն Աջեմյանին, որի ուղեկցությունը կարող էր խանգարել արտասահմանի ճանապարհորդության հետ կապված իր քաղաքական ծրագրերին, Թիֆլիսից շտապ մեկնում է Փոթի»[8]։

Միքայել Նալբանդյանի մենակ մեկնելու փաստը հետաքրքրել է նաև ցարական քննչական մարմիններին և նրանք հարցապնդել են Նոր Նախիջևանի քաղաքագլուխ Կ. Հայրապետյանին, որը պատասխանել է. Налбандов отправился одни за получением капитала потому, что Аджемов

4 Աշ. Հովհաննիսյան. Նալբանդյանը և նրա ժամանակը. հ. 1, Երևան, 1955, էջ 332։

5 ԳԱԹ, Մ. Նալբանդյանի ֆոնդ, № 123/187։

6 Մ. Նալբանդյան. Երկ, հ. 5, էջ 417։

7 Նույն տեղում, էջ 326—327։

8 Ա. Մ. Ինճիկյան. Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, Երևան, 1980, էջ 153։

медлил прибытием из С. Петербурга в Нахичеван. В письмах своих он, Аджемов, сначала писал о готовности к выезду, но заставлял токмо ожидать себя напрасно, как между тем время уходило; потому я в необходимости нашелся сделать распоряжение об отправлении одного Налбандова»[9].

Նկատի առնենք մի հանգամանք՝ Միքայել Նալբանդյանը 1860 թ. օգոստոսի 17-ին է Նոր Նախիջևանից մեկնել Էջմիածին և միայն նոյեմբերի 14-ին հասել Բաթում և այդ օրն էլ մեկնել Տրապիզոն։ Սա նշանակում է, որ երեք ամսից 3 օր պակաս ժամանակ նա գտնվել է ուղևորության նախապատրաստության մեջ ու անընդհատ նամակագրական կապ պահպանել Նոր Նախիջևանի հետ։ Նա նամակներ է գրել քաղաքագլուխ Կ. Հայրապետյանին, կաթողիկոս Մատթեոս Զուխաջյանին, եղել է Կովկասի փոխարքայի դիվանատեղում և ստացել արտասահմանյան անձնագիր և այլն և այլն։ Իսկ 1860 թ. հոկտեմբերի 10-ին արդեն կաթողիկոս Մ. Զուխաջյանը հաստատում է Նոր Նախիջևանի հասարակության 1860 թ. հուլիսի 15-ի որոշումը՝ Միքայել Նալբանդյանին և Հարություն Աջեմյանին լիազոր ներկայացուցիչներ ընտրելու մասին։ Դրանից հետո Միքայել Նալբանդյանը նամակով դիմում է Կովկասի փոխարքային, որպեսզի վերջինս իրեն և Հ. Աջեմյանին աջակցի։ Փոխարքան պաշտոնական գրությամբ ընթացք է տալիս Միքայել Նալբանդյանի խնդրանքին։ Ուրեմն, մինչև նոյեմբերի 1-ը, այսինքն մինչև ամենակարևոր գրության հաջողեցումը՝ Միքայել Նալբանդյանը հանդես է եկել իր և Հ. Աջեմյանի անունից և հենց նույն օրն էլ, երեկոյան, չսպասելով Հ. Աջեմյանին, Թիֆլիսից մեկնել է Փոթի։

Այս ընթացքում նորից ու նորից նրան հետապնդում են։ Բայց վերջապես նոյեմբերի 1-ից մինչև 13-ը գտնվելով Փոթիում, նա գնում է Բաթում և ապա ճանապարհվում Տրապիզոն։

Ո՞վ էր Հարություն Աջեմյանը։ Մի գործարար հայ վաճառական, որը լայն կապեր ուներ Ռուսաստանի, Եվրոպայի, Ասիայի, նաև Հնդկաստանի ու Կովկասի հայաբնակ կենտրոնների հետ։ Նա ապրում էր Պետերբուրգում, ճանաչված էր ոչ միայն տեղի հայության, այլև քաղաքի հասարակայնության կողմից։ Հ. Աջեմյանը «Հյուսիսափայլի» լույս ընծայման հենց առաջին ամսատետրակներից եղել է նրա բաժանորդը և նյութական ու բարոյական օգնություն մատուցել Ստ. Նազարյանցին և Միք. Նալբանդյանին։ Նրա անուն—ազգանունը հատուկ նշված է ամսագրի վերջին էջում։ Ընդ որում, «Հյուսիսափայլը» Պետերբուրգում ունեցել է ընդամենը 10 բաժանորդ և բոլորն էլ շատ նշանավոր հայեր, որոնցից 6-րդը ցուցակում Հարություն Աջեմյանն էր։ Հար. Աջեմյանը քաջածանոթ էր հնդկահայերի կտակների պատմությանը և դեռևս 1852 թ., Կ. Պոլսում եղած ժամանակ, այսինքն Միքայել Նալբանդյանից դեռևս 7 տարի առաջ, մտահոգվել էր կտակը Նոր Նախիջևան հասցնելու գործով, այդ մասին խորհրդակցելով Կ. Պոլսի պատրիարք Մատթեոս Զուխաջյանի հետ (որը հետագայում դարձավ Ամենայն հայոց կաթողիկոս) և ստանալով նրա գոտեպնդիչ պատասխանը։ Այդ ժամանակվանից 8 տարի անց, 1860 թ. հունիսի 29-ին Պետերբուրգից Նոր Նախիջևանի քաղաքագլուխ Կ. Հայրապետյանին գրած նամակում Հարություն Աջեմյանն ասում է. «Ես և պարոն Միխայիլ Նալբանդյանցն աղաչում ենք այս գործն առնինք մեր վրա և կատարիմք ձեր և հասարակի կամքն և հանգուցյալ Մասեհ Բաբաջանի կամքն 66 տարի անցնելուց հետո»[10]։ Այդ նույն նամակում նա տեղեկացնում է իր լայն կապերի մասին, ասում, որ ինքը վաղուցվանից է ճանաչում Ամենայն հայոց կաթողիկոսին, որը Միքայել Նալբանդյանին նույնպես լավ գիտի։ Այնուհետև հայտնում է, որ Հնդկաստանից «մեր մարդը» նոր լուրեր է հաղորդել կտակների

9 Միքայել Նալբանդյան. Վավերագրերի ժողովածու. Երևան, 1956, էջ 159։

10 ԳԱԹ, Մ. Նալբանդյանի ֆոնդ, 129/187—2։

վերաբերյալ և այլն։ Այս ամենից պարզորոշ երևում է, որ Հարություն Աջեմյանը երբեք պատահականություն չի եղել հնդկաստանյան առաքելության նախապատրաստության մեջ, ընդհակառակն, նա մի անձնավորություն էր, որը կապ էր պահպանում Կալկաթայի ու Մադրասի հայերի հետ, շահագրգռված էր այդ մեծ գումարները նորնախիջևանցիներին հասցնելու ուղղությամբ և Նոր Նախիջևանի քաղաքագլխին գրած իր նամակներում անընդհատ գործնական խորհուրդներ էր տալիս, շեշտում փաստաթղթերի պատրաստման մանրամասնությունները և միաժամանակ նշում. «Ես տեղս (այսինքն՝ Ս. Պետերբուրգում—Մ. Մ.) հետևում եմ էլի այս գործերուն» (3 օգոստոսի 1860 թ.)։

Հ. Աջեմյանը նամակներում հատկապես գրում է. «Պարոն Միխայիլ Լազարևիչ Նալբանգյանին հատուկ բարև կմատուցանեմ և չունիմ ոչինչ հարկավոր բան գրելու»։ Սրանից երևում է, որ ինքն ու Միքայել Նալբանդյանը արդեն ամեն ինչ գիտեին, դրել-վերցրել էին և որ դեռևս Պետերբուրգից Նոր Նախիջևան մեկնելուց առաջ Միքայել Նալբանդյանը կշռադատել էր իր ամեն մի քայլը, այդ մասին տեղեկացնելով Կ. Հայրապետյանին։

Կ. Հայրապետյանին 1860 թ. հուլիսի 13-ին նրա գրած նամակում կարդում ենք. «Աստված մեզ առողջություն և երկար կյանք տա, որ աշխատում ենք օգնել մեր Նախիջևանի ժողովրդին։ Ազգին օգնություն ունելը հազարապատիկ վեր և ազնիվ գործ է, քանց իր զավակներին»։ Այսպիսի նկարագրի տեր մարդը չէր կարող ապրել սոսկ «հեշտ կյանքի» համար, և մենք իրավունք չունենք գրչի մի շարժումով վարկաբեկելով՝ նրան դուրս հանել Միքայել Նալբանդյանի առաքելությունից, անկախ նրանից, թե նա վաճառական է եղել իր զբաղմունքով և իր նամակները գրել է տառասխալներով։ Սակայն սրանից չենք էլ բխեցնում, թե Հ. Աջեմյանը բաժանում էր Միքայել Նալբանդյանի ընդհանուր հայացքները, տեղյակ էր կամ համակիր էր նրա քաղաքական ծրագրերին։ Առայժմ հայտնի է դառնում, որ պարզապես նա ցանկանում էր հայրենասիրական, ազգօգուտ գործ կատարել[11]։ Բայց որ նա և Միքայել Նալբանդյանը մտերիմներ են եղել, ի հայտ է գալիս նաև նամակի այս տողերից. «Պարոն Նալբանդյանն ինչպես ասլովի շինե հասարակի հետ ձեր կամքովն ես հոժար եմ և ստորագրեմ այս ասլովին...»։ Հարություն Աջեմյանը դեռևս «Հյուսիսափայլի» № 1-ից լինելով նրա բաժանորդը, առանց կասկածանքի քաջածանոթ էր և Ստ. Նազարյանցին, և Միք. Նալբանդյանին, մի կապ, որը գնալով ավելի էր խորացել շնորհիվ Նոր Նախիջևանի քաղաքագլուխ Կ. Հայրապետյանի։ Եվ երբ Միքայել Նալբանդյանը մեկնել էր Պետերբուրգ հանձնելու կանդիտատական քննությունները, թերևս այս շրջանում էլ նրանց միջև կայացել էր հնդկաստանյան կտակների հետ կապված խոսակցություն-համագործակցությունը։ Միք. Նալբանդյանը 1859 թ. հոկտեմբերի վերջից գտնվում էր Պետերբուրգում և մնաց այնտեղ մինչև 1860 թ. հունիսի 15-ը. հավանաբար այդ ընթացքում էլ կարգավորել է հնդկաստանյան առաքելության նախապատրաստությունը, հանդիպումներ ունեցել Հ. Աջեմյանի հետ։ Եվ Միքայել Նալբանդյանի Նոր Նախիջևան հասնելուց մեկ-երկու օր առաջ արդեն Կ. Հայրապետյանն ստացել էր Հ. Աջեմյանի նամակը, որտեղ նա քաղաքագլխին տեղեկացնում էր, որ Միքայել Նալբանդյանը Մոսկվայից մեկնել է Նոր Նախիջևան 1860 թ. հունիսի 24-ին։

1860 թ. օգոստոսի 3-ին իր բարեկամ Նիկողոսին գրած նամակում Հ. Աջեմյանն ասել է. «Ինչպես որ ես ձեզ գրել եմ անցյալ հունիսի 29-ից և հիմա էլ գրում եմ այս գործն ես հոգով հոժար եմ կատարել պ. Նալբանդյանի հետ միասին»։ Եվ հենց այդտեղ «հոգով հոժար» բառերի վերևում Կարմիր թանաքով հատ-հատ գրել է՝ «filuo»։ Ընդ որում, ամբողջ նամակը գրված է կապույտ թանաքով, մաքուր, առանց որևէ փոփոխության կամ

11 Նույն տեղում, № 130։

ուղղման, չկա կարմիր թանաքի ոչ մի հետք, բացի այդ «քլիսօ» բառից, այսինքն հոգով հոժար եմ, բայց՝ քլիսօ: Դա, ըստ երևույթին, պայմանական ինչ-որ խոսք է, հատուկ նշված տողամիջում: Իմիջիայլոց, քլիսօ հունարեն նշանակում է փակ, ծածկված:

Ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ երբ արդեն Միքայել Նալբանդյանը գտնվում էր Հայաստանում և Թիֆլիսում ու արագացնում էր հնդկաստանյան առաքելության փաստաթղթերի պատրաստությունը, Նոր Նախիջևան է դալիս Հարություն Մկրտչի Աջեմյանը, բայց չի գնում Անդրբկովկաս, Միքայել Նալբանդյանի ետևից: Միքայել Նալբանդյանը Նոր Նախիջևան է տեղեկացնում, որ փաստաթղթերը պատրաստ են ու սպասում է Հ. Մ. Աջեմյանին: Քննչական հանձնաժողովը 1867 թ. մայիսի 22-ին արձանագրել է այս ամենը և ավելացրել. «... что городскому голове подано заявление неудовольствия против поездки одного Налбандова, только от десяти человек почетнейших граждан, но по этому заявлению, о приостановлении поездки его Налбандова, городским головою не было сделано распоряжения»[12].

Բայց, ինչպես ասացինք, Միքայել Նալբանդյանի միայնակ գնալու գործը վաղօրոք ու լավ էր նախապատրաստված: Դա պարզ ու որոշ երևում է հենց 1860 թ. օգոստոսի 8-ին Նոր Նախիջևանի հասարակության ժողովի կայացրած որոշումից, որտեղ ասված է. «Իսկ թէ դիպեսցի միում երեսփոխանացդ, վասն որևէ պատճառաց, բացակայ գտանիլ, յայնժամ յորում տեղւոջ և իցէ, յորոյ ի ձեռին ձէնջ և գացի թուղթս այս երեսփոխանութեան, այնպիսին ցուցանէ յինքեան զլրացեալ երեսփոխանութիւն ամբողջ ազգի մերոյ, բնակելոյ ի Նոր Նախիջևան քաղաքի, զորմէ թղթովս այսոսիկ խընդրեմք յամենայն ներքին և արտաքին իշխանութեանց, որոց առաջի արարեալ լինիցի թուղթս, ճանաչել զունող սորին որպէս մեզս ճանաչեմք և ընդունեմք: Բացակայութիւն միոյ ի ձէնջ ոչ միայն լուծանէ զմիւսն ի զօրութենէ, այլ ի ներհակն, որ բացակայն է և զիւր իշխանութիւն թողու ընկերի իւրում, այնպէս զի մնացողն ի պայմանեալ տեղւոջ, յորոյ ձեռին իցէ թուղթս այս, պատկերացուցանէ, յանձին իւրում զբովանդակ ոյժ և զի իրաւունս մերոյ հասարակութեան...»[13]:

Սա՝ Միքայել Նալբանդյանի և նրա համախոհների, առաջին հերթին քաղաքագլուխ Կարապետ Հայրապետյանի հեռատեսության, քաղաքական խորաթափանցության ու կազմակերպական տաղանդի արդյունքն էր, որը տվեց իր օգտավետ պտուղները: Քաղաքագլուխը, որ «բարեկամության և սիրո» կայուն զգացումներով էր կապված Միքայել Նալբանդյանի հետ, քաջալերում էր նրան, նպաստում նրա «աղավաղյալ վիճակի» բարվոքմանը, մեծապես օգնել է նաև «Հյուսիսափայլի» և գրողի այլ երկերի տպագրությանը: Մոսկվայից Կարապետ Հայրապետյանին 1858 թ. սեպտեմբերի 1-ին գրած նամակում Միքայել Նալբանդյանը կարծես թե երդվում է. «Ազգի և ճշմարտության համար իմ կյանքը իմ աչքումը ոչինչ է, և ամեն բոպե պատրաստ եմ զոհել, և այն օրից, երբ գրիչ վեր եմ առել ձեռքս, մինչև գերեզման պիտի պատերազմեմ ստության և խավարի հետ և, որքան թույլ տան մեզ շրջապատած հանգամանքը, պիտի խորտակեմ դավաճան վիշապի գլուխը» (ԵԼԺ, հ. 5, Եր., 1984, էջ 72—73): Սա գերագույն փոխվստահության արդյունք էր, որից էլ ելնելով հեղափոխական դեմոկրատը խնդրելով հանձնարարում է քաղաքագլխին՝ «առանձին ուշադրությամբ կարդաք 7 և 8 համարների «Հիշատակարանը» և չհասկացողներուն հասկացնեք բանի զորությունը, որ ճշմարտությունը ձայն ստանա այդ կորած և մոլորած քաղաքի մեջտ: Այդ նույն նամակում նա պարզորոշ դնում է Կարապետ Հայրապե-

---

12. Միքայել Նալբանդյան. Վավերագրերի ժողովածու, էջ 176:
13. Նույն տեղում, էջ 128—129:

տյանի և իր ու համախոհների «ընկերության (партия) դրոշակի կանգնության հարցը՝ համատեղ ջանքերով»։ Իսկ երկու ամիս անց գրած մեկ այլ նամակում շեշտում է. «Դուք պիտի պահպանեք մեր օրագիրը, նա և Ձերն է, որովհետև ազգինն է»։

Ահա այսպիսի դեմքերով էր նաև շրջապատված Միքայել Նալբանդյանը, որոնցից մեկն էլ, մեր կարծիքով, Հարություն Աջեմյանն է։

Ուշագրավ մի հանգամանք ևս։ Բանտարկության մեջ նույնպես նա մնաց ճկուն տակտիկ։ Իր սենատական ցուցմունքներով Միքայել Նալբանդյանը բնավ չի անդրադառնում Հարություն Աջեմյանին նույնիսկ այն դեպքում, երբ նրան ուղղակիորեն հարցապնդում են, թե Պետերբուրգում, Մոսկվայում և Ռուսաստանի այլ վայրերում ի՞նչ ծանոթներ ունի, ե՞րբ և ի՞նչ առիթներով է ծանոթացել նրանց հետ։ Պարզ է, որ ամեն կերպ նա աշխատել է Հ. Աջեմյանին հեռու պահել գործի մեջ ներքաշվելուց, իսկ Կ. Հայրապետյանն էլ խոհեմաբար իր վրա էր առել Հ. Աջեմյանի կողմից իբր Միքայել Նալբանդյանին չսպասելու հանգամանքը։ Բայց ահա, երբ Միքայել Նալբանդյանը ձերբակալված էր Պետրոպավլովյան ամրոցում, նրան երկու անգամ այցելում է նաև Հարություն Աջեմյանը։ Սա առավել քան ուշագրավ հանգամանք է, վկայությունը մեծ հեղափոխականի անձնավորության և գործի նկատմամբ Հ. Աջեմյանի ունեցած բազմակողմանի հարգանքի, մի նոր լույս սփռելով նաև նրա կողմից տրված համաձայնության վրա, որպեսզի Միք. Նալբանդյանը մենակ գնար Հնդկաստան։

Ի դեպ, Միխ. Լեմկեն անդրադառնալով Միքայել Նալբանդյանի սենատական ցուցմունքներին, գրել է. «Комиссия очень была недовольна ловкостью сочинявшего всякие легенды Налбандяна и отказала его брату, Лазарю, в свиданиях с заключенным. Только настойчивые представления, что свидание необходимо для выяснения некоторых вопросов по наследственному процессу нахичеванцев, склонили комиссию дать братьям чисто деловое свидание»[14]. Սրանից նույնպես հետևում է, որ Հ. Աջեմյանը Պետերբուրգում լայն ու մեծ կապեր է ունեցել, որի շնորհիվ կարողացել է այցելել բանտարկված Միքայել Նալբանդյանին, իր հետ տանելով նաև հեղափոխականի եղբորը։

1861 թ. հունիսի 26/հուլիսի 8-ին Կալկաթայից Անկանիա Սուլթանշահին գրած նամակում Մ. Նալբանդյանը հորդորում է նրան մի ազատամիտ բան թարգմանելու «Հյուսիսափայլի» համար և ասում. «...այդ օրագիրը մեր թախտի օռգանն է...»[15]։ Իսկ այդ «թախտի օռգանի» մշտական բարեկամներից ու առաջին ընթերցողներից է եղել նաև Հարություն Աջեմյանը, որին վստահել է նաև Նոր Նախիջևանի քաղաքագլուխ Կարապետ Հայրապետյանը։

Այստեղ ցանկանում ենք մեկ անգամ էլ ուշադրություն հրավիրել, մեր կարծիքով, կարևոր խնդիրների վրա։ Առաջինը Մասեհ Բաբաջանյանի ու մյուս հնդկահայերի հայրենանվեր գործի գնահատությունն է։ Միքայել Նալբանդյանն առաջարկում է հավերժացնել Մ. Բաբաջանյանի հիշատակը,

---

[14] М. Лемке. Очерки освободительного движения шестидесятых годов. СПб, 1908, с. 115.

[15] Մ. Նալբանդյան, երկ. հ. 5, էջ 144։

կանգնեցնելով նրա արձանը։ Անցնում է ժամանակ և երբ մեծ հեղափոխական-դեմոկրատը գտնվում էր Պետրոպավլովյան ամրոցի մենախցում, Նոր Նախիջևանի հասարակայնության ժողովը, հարյուր ինն հոգու ստորագրությամբ, որոշում է հասարակական ծախսերով մարմարյա հուշարձան կանգնեցնել Մասեհ Բաբաջանյանին՝ հայերեն և անգլերեն տապանագրերով։ Որոշման մեջ շեշտվում է, որ նա եղել է հայոց լուսավորության, աղքատների, որբերի և թշվառների պաշտպանը։ Այս փաստը ինքնին արդեն բավական է, որպեսզի ցույց տրվի Կ. Հայրապետյանի և նրա համախոհների սերն ու հարգանքը ոչ միայն Մ. Բաբաջանյանի նկատմամբ, այլև Միքայել Նալբանդյանի, որը տանջվում էր ցարիզմի ճիրաններում։

Չմոռանանք նշել, որ Միքայել Նալբանդյանը Հնդկաստանում փորձեր է կատարել նպաստելու Պետերբուրգի և Մոսկվայի առևտրական տների հետ հնդկահայ վաճառականոցների ու վաճառականների կապերի աշխուժացմանը։ Բացի այդ, նա կոչ է արել հնդկահայերին դառնալու մասնակից հայկական բարեգործական ընկերության, որի կենտրոնը Եգիպտոսում էր։ Սա էլ իր հերթին հաստատորեն վկայում է, որ Միքայել Նալբանդյանը հետամտում էր հայկական գաղթօջախները մեկ շղթայի մեջ առնելու նպատակ, դրանով իսկ շարունակելով իր առաջադիմական նախորդների հայրենաշիրակյան գործը։